ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Հաստատված է
ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի
գիտական խորհրդի
2020 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ 47 նիստում,

Գիտական խորհրդի նախագահ
ԵՊՀ ԻՄ տնօրեն _____ Ա.Մակարյան
«_____» _____ 2020թ.

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի 2020-25թթ. գիտահետազոտական գործունեության զարգացման

Իջևան 2020

Ներածություն

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտահետազոտական գործունեության զարգացումը, որը պայմանավորված է ՀՀ, մասնավորապես Տավուշի մարզի, տնտեսության արդիականացման ու մրցունակության բարձրացման գործընթացներում մասնաճյուղի իրական մասնակցության անհրաժեշտությամբ, պահանջում են հայեցակարգի և դրա իրականացման կառուցակարգերի մշակում:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի 2020-2025 թթ. գիտահետազոտական գործունեության զարգացման հայեցակարգը (այսուհետ' հայեցակարգ) մշակված է «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքների հիման վրա:

Հայեցակարգում ձևակերպված են ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտահետազոտական գործունեության զարգացման նպատակները, խնդիրները և հիմնական ուղղությունները մինչև 2025 թ. ժամանակահատվածը:

I. Գիտահետազոտական գործունեության ընթացիկ վիճակը ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում

Ներկայում մասնաճյուղում վերանայվում են գիտահետազոտական գործունեության կազմակերպման սկզբունքները:

Մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմը 150-ից ավելի է, որից 86-ն ունեն գիտական աստիճան, այդ թվում՝ 10-ը գիտության դոկտոր են: Թեև տարեցտարի ավելանում են մասնաճյուղի աշխատակիցների գիտական հրապարակումները, այդուհանդերձ, գիտական այդ ներուժը լիարժեք չի իրացվում:

Չնայած գիտահետազոտական գործունեության բնագավառում մասնաճյուղի որոշ ձեռքբերումներին, այդուհանդերձ, առկա են մի շարք խնդիրներ.

- իրականացվող հետազոտությունների զգալի մասը համահունչ չէ գիտության զարգացման ժամանակակից ուղղություններին, չունի կիրառական նշանակություն,
- հետազոտությունները միտված չեն երկրում կուտակված սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծմանն առնչվող առաջարկությունների մշակմանը,
- փոքր է համալսարանի գիտնականների մասնակցությունը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մշակման գործընթացներում,
- բացակայում է ամբիոնների փոխգործակցությունը հետազոտություններում,
- դասախոսների փոքր մասն է ներգրավված հետազոտություններում,
- ուսանողների փոքր մասն է տիրապետում գիտահետազոտական և նորա-ստեղծական հիմնական հմտություններին,
- հետազոտությունները միջազգայնացված չեն, մասնաճյուղի հետազոտողների փորձառությունները գրեթե չեն անցկացվում արտասահմանյան գիտական կենտրոններում,
- փոքրաթիվ են հետազոտությունների արդյունքների հրապարակումներն արտասահմանյան առաջատար ամսագրերում:

Ի հավելումն թվարկված խնդիրների, չեն ընդլայնվում մասնաճյուղի գիտական գործունեության ուղղությունները և գիտահետազոտական աշխատանքների

թեմատիկան, չի աճում կատարողների թիվը, գիտական աշխատանքներում գրեթե չեն ներգրավվում ուսանողները:

Գիտությունը դեռևս չի դարձել մասնաճյուղի կրթական գործընթացի անքակտելի մասը: Գիտահետազոտական գործունեությունը չի կատարելագործվում՝ մասնաճյուղի առջև կանգնած խնդիրների հաշվառմամբ:

Վերոնշյալը հիմք է եզրակացնելու, որ սույն հայեցակարգի դրույթների իրականացումը թելադրված է ժամանակի պահանջներով և բխում է մասնաճյուղի զարգացման նպատակներից:

II.ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտահետազոտական գործունեության զարգացման նպատակները և խնդիրները

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտահետազոտական գործունեության զարգացման գլխավոր նպատակը մասնաճյուղի գիտական ներուժի օգտագործումն է՝ բարձր որակավորման, հետազոտական և նորաստեղծական հմտություններով օժտված, կադրերի պատրաստման, երկրի և հատկապես Տավուշի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման համար:

Համաձայն ՀՀ գիտական, գիտատեխնիկական և նորաստեղծական քաղաքականության, ինչպես նաև մասնաճյուղի մասնագիտացման հաշվառմամբ, մասնաճյուղի գիտական գործունեության գերակա ուղղություններն են. տնտեսական և սոցիալական զարգացումը, տարածական զարգացումը, տեխնոլոգիական զարգացումը, տնտեսական անվտանգությունը, բնօգտագործումը և էկոլոգիական անվտանգությունը, սոցիալ հոգեբանական անվտանգությունը, ժողովրդագրական անվտանգությունը:

Սահմանված նպատակներին հասնելու համար պետք է լուծել հետևյալ հիմնական խնդիրները.

- մասնագետների պատրաստման որակի բարձրացում՝ հետազոտություններում ներգրավելով դասախոսներին և ուսանողներին՝ սկսած բակալավրիատի 1-ին կուրսից,

- երիտասարդական գիտական կազմակերպությունների ստեղծում և աջակցություն,

-նոր գիտելիքի ստեղծում և նորաստեղծական մտավոր միջավայրի ձևավորում,

- երկրի զարգացման գերակայություններին և համաշխարհային զարգացման միտումներին համահունչ ուղղություններով հետազոտությունների ձեռնարկում,

- դասախոսների նշանակալի մասի մասնակցության ապահովում գիտահետազոտական գործունեության մեջ,

- ուսանողների մեծ մասին գիտահետազոտական հիմնական հմտություններով օժտում,

- հետազոտությունների միջազգայնացում,

- արտասահմանյան հետազոտական կենտրոններում փորձառություն անցնող մասնաճյուղի դասախոսների թվի ավելացում,

- արտասահմանյան առաջատար ամսագրերում գիտական հետազոտությունների արդյունքների հրապարակումների թվի ավելացում,

- երկրի գիտատեխնիկական և հատկապես Տավուշի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման կանխատեսումների մշակում,

-գիտական հետազոտություններում երիտասարդ մասնագետների ներգրավման աշխատանքի ակտիվացում,

- հետազոտությունների ինտեգրում ուսումնական գործընթացներին,

- մասնաճյուղի գիտական դպրոցների ձևավորում, նրանց նյութական հենքի ամրապնդում,

- ստեղծագործական կապերի ամրապնդում, համագործակցություն Երևանի պետական համալսարանի, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի, հայրենական և արտասահմանյան գիտական կենտրոնների հետ, վերջիններից մասնագետների ներգրավում՝ համատեղ հետազոտությունների համար,

-գիտական հետազոտությունների զարգացման համար բոլոր մակարդակների բյուջեներից, հիմնադրամներից, ընկերություններից և մասնավոր ներդրողներից

միջոցների ներգրավման ակտիվացում, սեփական միջոցներից մասնաճյուղի եկամտի առնվազն 3% հատկացումների ապահովում,

-գիտական հետազոտությունների մշտադիտարկման և արդյունքների գնահատման համակարգի ներդրում,

- մասնաճյուղի նորաստեղծական ենթակառուցվածքի զարգացում (բիզնես ինկուբատորներ, հետազոտական կենտրոններ) և դրա ինտեգրում ՀՀ տնտեսական և կրթական տարածությունում:

III. Հայեցակարգի իրականացման հիմնական ուղղությունները

Հայեցակարգի իրականացումը պահանջում է համակարգային փոփոխություններ մասնաճյուղի գործունեության մեջ, որոնք առնչվում են ինչպես հետազոտությունների կազմակերպմանը, այնպես էլ կրթական գործընթացի բովանդակությանը և մեթոդներին: Գիտական հետազոտությունները և մշակումները պետք է դառնան բոլոր դասախոսների և ուսանողների մեծ մասի աշխատանքի իրական մասը:

Ուսանողների մասնակցությունը հետազոտություններին հնարավորություն է ընձեռում.

- իրապես պատկերացնել իրենց ապագա մասնագիտական գործունեությունը զարգացման մեջ, իմաստավորել հիմնարար գիտելիքների յուրացման նշանակությունը,
- ձեռք բերել ինտենսիվ գործնական աշխատանքի փորձ (այն դեպքում, եթե հետազոտություններն իրականացվում են անմիջականորեն առևտրային կազմակերպություններում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում),
- հստակեցնել իրենց ապագա մասնագիտական գործունեության ուղղությունը, ձեռքբերվող կրթության պրոֆիլը,
- ավելի իմաստավորված, նպատակասլաց և շարժառիթայնացված աշխատել տեղեկատվության հետ, դրանից կարողանալ գիտելիք կորզել:

Գիտական հետազոտությունների կազմակերպման և կառավարման համակարգի

փոփոխությունները ներառում են հետազոտությունների, մշակումների և մտավոր սեփականության պաշտպանության համար պատասխանատու ստորաբաժանումների ուժեղացում:

Մասնաճյուղում անընդհատ պետք է ձևավորվի և կատարելագործվի նորա-ստեղծական ենթակառուցվածքը: Հայեցակարգի իրականացման ընթացքում կզարգանան միջառարկայական հետազոտությունները և մշակումները:

Կադրային քաղաքականության հիմքում կլինեն առավել արդյունավետ աշխատող գիտնականների նպատակային աջակցությունը և հետազոտական որոշակի արդյունքների խթանումը, ինչը կիրականացվի ինչպես հետազոտական աշխատանքների անցկացման առանձին նախագծերի շրջանակներում, այնպես էլ պրոֆեսորադասախոսական կազմի վարձատրության շրջանակներում: Կձեռնարկվեն երիտասարդ հետազոտողների և դասախոսների գիտական գործունեության աջակցության ծրագրային միջոցառումներ:

Նախատեսվում է ստեղծել պայմաններ՝ երկրի և հատկապես Տավուշի մարզի տնտեսական, սոցիալական, տարածական և տեխնոլոգիական զարգացմանը, տնտեսական, էկոլոգիական, սոցիալ-հոգեբանական անվտանգությանը և կարևոր այլ բնագավառներում հետազոտությունների անցկացման խմբերի ձևավորման համար, որոնք առևտրային կազմակերպությունների և տնտեսության ճյուղերի համար հետագայում կդառնան ռեսուրսային կենտրոններ, կիրականացնեն խորհրդատվական և տեղեկատվական-վերլուծական գործունեություն:

Մասնավոր հատվածի ընկերությունների հետ մասնաճյուղը կզարգացնի հետազոտական ենթակառուցվածքը, այդ թվում՝ գիտելիքի և կրթական ռեսուրսների շտեմարաններ: Հայեցակարգի իրականացման կարևոր կողմնորոշիչը կլինի կրթության, հետազոտությունների, մշակումների և ներդրման ինտեգրումը:

Մասնաճյուղի գրադարանը կհագեցվի հայրենական ու արտասահմանյան գիտական հրատարակություններով:

Մասնաճյուղը աշխատանքներ կիրականացնի սովորողների սեզոնային դպրոցների, օլիմպիադաների և գիտագործնական համաժողովների անցկացման

ուղղությամբ, ինչը կապահովի ապագա ուսանողների մասնագիտական կողմնորոշումը, կնպաստի հետազոտական հմտությունների, հետազոտական աշխատանքի ու գիտության նկատմամբ հետաքրքրության ձևավորմանը սկսած դպրոցից:

IV. Հայեցակարգի իրականացման կառուցակարգերը

Հայեցակարգի հիմնական ուղղությունների իրականացման հիմքում խթանման կառուցակարգերն են, որոնցից են.

- առանձին նախագծերի մրցութային աջակցությունը,
- մասնաճյուղի նյութատեխնիկական հենքի զարգացման արդյունավետ համակարգի ձևավորումը,
- գիտական նախագծեր կատարող գիտամանկավարժական խմբերի համար անհրաժեշտ ենթակառուցվածքի ապահովումը,
- ուսանողների և գիտամանկավարժական աշխատողների գիտական գործունեության նյութական և սոցիալական նպաստավոր պայմանների ստեղծումը:

Կրթության որակի բարձրացման, գիտության հետ դրա մերձեցման և շուկայի պահանջների բավարարման համար պահանջվում է.

- համատեղ գիտահետազոտական աշխատանքների կատարման իրականացում և արդյունքների ներդրում կազմակերպություններում,
- կրթության բովանդակային բաղադրիչի կառավարում՝ կորպորատիվ կրթական ծրագրերում համալսարանի գիտամանկավարժական աշխատողների մասնակցության միջոցով,
- կադրերի պատրաստման և վերապատրաստման ծրագրերի իրականացման համար շարունակական և լրացուցիչ կրթության կենտրոնի գործունեության արդյունավետության բարձրացում,
- գիտության և նորաստեղծական գործունեությանն աջակցող ինստիտուցիոնալ կառույցների ստեղծում (լաբորատորիաներ, գիտահետազոտական կենտրոններ),
- նախագծերի կառավարման արդյունավետ համակարգի ապահովում, գիտական

աշխատողների հիմնարար և տեսական պատրաստվածության զարգացում:

V. Առաջընթացի գնահատման ցուցիչները

Սույն հայեցակարգի շրջանակներում մասնաճյուղի գիտահետազոտական գործունեության զարգացման ցուցիչներն են՝

- տնտեսության մասնավոր հատվածից և պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմիններից հետազոտությունների պատվերների ծավալը,
- մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմի հրապարակումների ցիտման համաթվի բարձրացումը,
- տնտեսության իրական հատվածում կամ գիտական կազմակերպություններում փորձառություն անցնող ուսանողների թվի աճը,
- հետազոտություններում պրոֆեսորադասախոսական կազմի մասնաբաժնի մեծացումը,
- սեփական միջոցներից հատկացումները հետազոտություններին (եկամտի առնվազն 3%)
- հետազոտությունների պատվերներից ստացվող եկամուտները (մինչև եկամտի 10%):